# ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

***24.11.2006թ. նիստին***

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, Վ.Դանիելյանը, Ա.Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Ա.Աղազարյանը:

***Հրավիրված էին՝***

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական տիկին Ջ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա. Անանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Գ. Գյուրջյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը:

***Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.***

1. **Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 229-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:**
   */Զեկուցող՝ Ա. Հայրապետյան/*

***Որոշեցին՝***

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ ու այդ պաշտոնները զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին» N 229-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

որոշմամբ հաստատված N 2 հավելվածի՝

1) 11-րդ կետի «, ինչպես նաև ավելի բարձր դասային աստիճանի շնորհման նպատակահարմարությունը» բառերը հանել.

2) 12-րդ կետի «ե» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե) անցկացնում է թեստավորման եւ հարցազրույցի միջոցով ատեստավորում.»:

*/Նորմատիվ/*

2. **Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության**

**պետական խորհրդի 2000 թվականի օգոստոսի 15-ի թիվ 10 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:**
*/Զեկուցող՝ Վ. Սարոյան/*

***Որոշեցին՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2000 թվականի օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 10 որոշումը:
*/Նորմատիվ/*

**3. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի մայիսի 10-ի թիվ 109 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:**
*/Զեկուցող՝ Վ. Սարոյան/*

***Որոշեցին՝***

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի մայիսի 10-ի «Վարչական (տեղեկատվական) ռեգիստրների վարման և դրանցից տեղեկատվության ստացման կարգը հաստատելու մասին» թիվ 109 որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունը.
ա) կարգի «4. Ճյուղային (գերատեսչական) վարչական ռեգիստրները» մասի երրորդ պարբերությունից հանել «արձանագրային» բառը:
*/Նորմատիվ/*

**4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

**4.1 Հաշվետվություն «Վնասակար արտանետումների և վտանգավոր թափոնների կառավարման ԱՄՆ-ի ֆեդերալ և նահանգային գործընթացներին ծանոթանալու և փորձը ուսումնասիրելու նպատակով» 2006թ. սեպտեմբերի 16-ից հոկտեմբերի 7-ը ԱՄՆ կատարած այցելության վերաբերյալ:**
*/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/*

***Որոշեցին՝***

Ընդունել ի գիտություն «Վնասակար արտանետումների և վտանգավոր թափոնների կառավարման ԱՄՆ-ի ֆեդերալ և նահանգային գործընթացներին ծանոթանալու և փորձը ուսումնասիրելու նպատակով» 2006թ. սեպտեմբերի 16-ից հոկտեմբերի 7-ը ԱՄՆ կատարած այցելության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:
*/Արձանագրային/*

**4.2 Հաշվետվություն 2006թ. հոկտեմբերի 23-25-ը Թբիլիսիում կայացած «Շրջակա միջավայրի վիճակի գնահատման էկոլոգիական ցուցանիշների սահմանման և զեկույցներում դրանց կիրառման աշխատանքային խմբի տարածաշրջանային խորհրդակցությանը» մասնակցության վերաբերյալ:**
*/Զեկուցող՝ Յու. Պողոսյան /*

***Որոշեցին՝***

Ընդունել ի գիտություն 2006թ. հոկտեմբերի 23-25-ը Թբիլիսիում կայացած «Շրջակա միջավայրի վիճակի գնահատման էկոլոգիական ցուցանիշների սահմանման և զեկույցներում դրանց կիրառման աշխատանքային խմբի տարածաշրջանային խորհրդակցությանը» մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:
*/Արձանագրային/*

**4.3 Հաշվետվություն 30.10-03.11 2006թ. Դոնեցկում (Ուկրաինա) կայացած «Շրջակա միջավայրի վրա ազդեցության, վիճակի և պատասխան ռեակցիայի գնահատման էկոլոգիական ցուցանիշների սահմանման, զեկույցներում դրանց կիրառման և ազգային զեկույցների պատրաստման ձևաչափի սահմանման Աշխատանքային խմբի խորհրդակցությանը» մասնակցության վերաբերյալ:**
*/Զեկուցող՝ Յու. Պողոսյան /*

***Որոշեցին՝***

Ընդունել ի գիտություն 30.10-03.11 2006թ. Դոնեցկում (Ուկրաինա) կայացած «Շրջակա միջավայրի վրա ազդեցության, վիճակի և պատասխան ռեակցիայի գնահատման էկոլոգիական ցուցանիշների սահմանման, զեկույցներում դրանց կիրառման և ազգային զեկույցների պատրաստման ձևաչափի սահմանման Աշխատանքային խմբի խորհրդակցությանը» մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:
*/Արձանագրային/*

**4.4 Հաշվետվություն 18.10-20.10.2006թ. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Կայուն քաղաքային տրանսպորտը և հողօգտագործման պլանավորում» թեմայով խորհրդակցությանը մասնակցության վերաբերյալ:**
*/Զեկուցող՝ Գ. Թորոսյան /*

***Որոշեցին՝***

Ընդունել ի գիտություն 18.10-20.10.2006թ. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Կայուն քաղաքային տրանսպորտը և հողօգտագործման պլանավորում» թեմայով խորհրդակցությանը մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:
*/Արձանագրային/*

**4.5 Հաշվետվություն 23.10-03.11.2006թ. Վիեննայում (Ավստրիա) կազմակերպված «Գների վիճակագրություն» ուսուցողական կուրս-սեմինարին մասնակցության վերաբերյալ:**
*/Զեկուցող՝ Գ. Մարտիրոսյան /*

***Որոշեցին՝***

Ընդունել ի գիտություն 23.10-03.11.2006թ. Վիեննայում (Ավստրիա) կազմակերպված «Գների վիճակագրություն» ուսուցողական կուրս-սեմինարին մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:
*/Արձանագրային/*

4.6 **Հաշվետվություն 30.10-01.11.2006թ. Մոսկվայում (Ռուսաստան) կայացած «Վարչական տվյալների օգտագործումը տնտեսական վիճակագրության մեջ» խորագրով ռեգիոնալ սեմինարին մասնակցության վերաբերյալ:**
*/Զեկուցող՝ Ա. Անանյան /*

***Որոշեցին՝***

Ընդունել ի գիտություն 30.10-01.11.2006թ. Մոսկվայում (Ռուսաստան) կայացած «Վարչական տվյալների օգտագործումը տնտեսական վիճակագրության մեջ» խորագրով ռեգիոնալ սեմինարին մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:
*/Արձանագրային/*

4.7 **Հաշվետվություն 23.10-27.10.2006թ. «Գների վիճակագրության կատարելագործումը թեմայով» Վիեննա կատարած այցելության վերաբերյալ:**
*/Զեկուցող՝ Ս. Մնացականյան, Գ. Գևորգյան, Գ. Անանյան, Ա. Սաֆյան, Մ. Երիցյան, Գ. Պետրոսյան/*

***Որոշեցին՝***

Ընդունել ի գիտություն 23.10-27.10.2006թ. «Գների վիճակագրության կատարելագործումը թեմայով» Վիեննա կատարած այցելության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:
*/Արձանագրային/*

4.8 **Հաշվետվություն 15.11-17.11.2006թ. Օսլոյում (Նորվեգիա) ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) և Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից համատեղ կազմակերպված «Վիճակագրությունը կայուն զարգացման համար» թեմայով աշխատանքային խմբի հանդիպմանը և Նորվեգիայի ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված կոնֆերանսի մասնակցության վերաբերյալ:**
*/Զեկուցող՝ Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան/*

***Որոշեցին՝***

Ընդունել ի գիտություն 15.11-17.11.2006թ. Օսլոյում (Նորվեգիա) ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) և Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից համատեղ կազմակերպված «Վիճակագրությունը կայուն զարգացման համար» թեմայով աշխատանքային խմբի հանդիպմանը և Նորվեգիայի ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված կոնֆերանսի մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:
*/Արձանագրային/*

*08.12.2006թ. նիստին*

*Մասնակցում էին՝*

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Վ.Դանիելյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, Ա.Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Ա.Աղազարյանը:

*Հրավիրված էին՝*

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական տիկին Ջ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Գ. Գյուրջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի վիճակագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի պարենային ապահովության վիճակագրության բաժնի մասնագետ Լ. Պետրոսյանը:

*Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.*

1. **Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 37-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:**
   */Զեկուցող՝ Լ. Քալանթարյան, Կ. Կույումջյան/*

*Որոշեցին՝*

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 23-ի «2006 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 37-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա/ հավելված III-ի «Վիճակագրական ժողովածուներ» բաժնից հանել.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1400-102 | Աշխատուժը Հայաստանի Հանրապետությունում 2001-2005 | հայերեն | - “ - | Ժողովածուն պարունակելու է տեղեկություններ աշխատանքի շուկայի՝ աշխատուժի առաջարկի, զբաղվածների և գործազուրկների, տնտեսապես ակտիվ, ոչ ակտիվ բնակչության կառուցվածքի վերաբերյալ՝ տնային տնտեսություններում իրականացված աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքներով: |

տողը.

բ/ հավելված III-ի «Վիճակագրական տեղեկագրեր» բաժնից հանել.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5000-202 | Հայաստանի Հանրապետության Գ-յուղական համայքների բնակչության թվաքանակը և դրանցում տնային տնտեսությունների քանակը 2006 թվականի հունվարի 1-ի դրությամբ | հայերեն | տարեկան | հունիս |

տողը.

գ/ հավելված Y-ի «Տեղեկագրեր» հատվածից հանել «ժողովրդագրություն» սյունը.

դ/ հավելված X-ի «Վիճակագրական հրապարակումների օրացույց» բաժնից հանել.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 41. | 1400-102 | Աշխատուժը Հայաստանի Հանրապետությունում 2001-2005 | -“- | -“- | -“- |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 27. | 5000-202 | Հայաստանի Հանրապետության Գ-յուղական համայքների բնակչության թվաքանակը և դրանցում տնային տնտեսությունների քանակը 2006 թվականի հունվարի 1-ի դրությամբ, ձև թիվ 9Ս հաշվետվության արդյունքներով | - “ - | - “ - | հունիս |

տողերը.

ե/ հավելված X-ի «Վիճակագրական հրապարակումների օրացույցը թեմատիկ ներկայացմամբ» բաժնից հանել.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 34. | 1400-102 | Աշխատուժը Հայաստանի Հանրապետությունում 2001-2005 | -“- | հայերեն | IV եռամսյակ |
| 47. | 5000-202 | Հայաստանի Հանրապետության Գ-յուղական համայքների բնակչության թվաքանակը և դրանցում տնային տնտեսությունների քանակը 2006 թվականի հունվարի 1-ի դրությամբ, ձև թիվ 9Ս հաշվետվության արդյունքներով | - “ - | - “ - | հունիս |

տողերը:

*/Նորմատիվ/*

2. **«Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից՝ 2005թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան Հայաստանում ՄԱԶԾ-ին տրամադրելու թույլտվության մասին:**
*/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/*

***Որոշեցին՝***

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանում ՄԱԶԾ-ին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2005թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան հետևյալ՝ տրամադրվող անվանազերծված տեղեկատվությունը զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

3. **2007թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին:**
*/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/*

***Որոշեցին՝***

Հաստատել 2007 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության Հարցաթերթը և Օրագիրը՝ համաձայն հավելվածի:
*/Անահատական/*

4. **Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

4.1 **Հաշվետվություն «Սննդի բաղադրության վերաբերյալ տվյալների արտադրությունը ու օգտագործումը սննդում» խորագրով որակավորման դասընթացին մասնակցության վերաբերյալ – 5.11-25.11 2006թ, Հայդարաբադ (Հնդկաստան):**
*/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/*

***Որոշեցին՝***

Ընդունել ի գիտություն «Սննդի բաղադրության վերաբերյալ տվյալների արտադրությունը ու օգտագործումը սննդում» խորագրով որակավորման դասընթացին մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:
*/Արձանագրային/*

4.2 **Հաշվետվություն 14.-15.11.2006թ. «Բիզնես ռեգիստրի ձևավորումը» թեմայով Հելսինկի (Ֆինլանդիա) կատարված ուսումնական այցելության վերաբերյալ:**
*/Զեկուցող՝ Գ. Անանյան, Ի. Սարգսյան, Հ. Եղիազարյան/*

***Որոշեցին՝***

Ընդունել ի գիտություն 14.-15.11.2006թ. «Բիզնես ռեգիստրի ձևավորումը» թեմայով Հելսինկի (Ֆինլանդիա) կատարված ուսումնական այցելության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:
*/Արձանագրային/*

4.3 **Հաշվետվություն ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի, Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատի) հրավերով և ՄԱԿ-ի Բնակչության Հիմնադրամի ֆինանսավորմամբ «Միգրացիայի վիճակագրություն» խորագրով 20-24.11.2006թ. Էդինբուրգում (Շոտլանդիա) կազմակերպված աշխատանքային հանդիպման մասնակցության վերաբերյալ:**
*/Զեկուցող՝ Գ. Գևորգյան, Ա. Գյուլբենկյան /*

***Որոշեցին՝***

Ընդունել ի գիտություն ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի, Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատի) հրավերով և ՄԱԿ-ի Բնակչության Հիմնադրամի ֆինանսավորմամբ «Միգրացիայի վիճակագրություն» խորագրով 20-

24.11.2006թ. Էդինբուրգում (Շոտլանդիա) կազմակերպված աշխատանքային հանդիպման մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:
*/Արձանագրային/*

**4.4 Հաշվետվություն TACIS ծրագրի «Վիճակագրություն-8» նախագծի «Գների վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում 27.11-01.12.2006թ. Միլանում (Իտալիա) կազմակերպված աշխատանքային հանդիմանը մասնակցության վերաբերյալ:**
*/Զեկուցող՝ Գ. Մարտիրոսյան/*

***Որոշեցին՝***

Ընդունել ի գիտություն TACIS ծրագրի «Վիճակագրություն-8» նախագծի «Գների վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում 27.11-01.12.2006թ. Միլանում (Իտալիա) կազմակերպված աշխատանքային հանդիմանը մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:
*/Արձանագրային/*

***21.12.2006թ. նիստին***

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Վ.Դանիելյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, Ա.Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Ա.Աղազարյանը:

***Հրավիրված էին՝***

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Գ. Սարգսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Կարապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման, մարկետինգի և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը:

***Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.***

1. **«2007 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» հաստատելու մասին»**
*/Զեկուցող՝ Ն. Մուշեղյան/*

***Որոշեցին՝***
Հաստատել «2007 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը»:
*/Նորմատիվ/*

2. **«Անհատական սպառում՝ ըստ նպատակների» վիճակագրական դասակարգիչը հաստատելու մասին:**
   */Զեկուցող՝ Գ. Սարգսյան/*

   ***Որոշեցին՝***

Հաստատել «Անհատական սպառում՝ ըստ նպատակների» վիճակագրական դասակարգիչը:
*/Անհատական/*

3. **Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բնակչության զբաղվածության մասին» Ձև թիվ 1-զբաղվածություն (ամսական) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու մասին:**
   */Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/*

   ***Որոշեցին՝***

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բնակչության զբաղվածության մասին» Ձև թիվ 1-զբաղվածություն (ամսական) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին:
*/Արձանագրային/*

4. **Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բնակչության զբաղվածության մասին» Ձև թիվ 1-զբաղվածություն (եռամսյակային) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու մասին:**
   */Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/*

   ***Որոշեցին՝***

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բնակչության զբաղվածության մասին» Ձև թիվ 1-զբաղվածություն (եռամսյակային) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին:
*/Արձանագրային/*

5. **«Կազմակերպությունների կողմից կատարված բնապահպանական ծախսերը» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին:**
   */Զեկուցող՝ Յու. Պողոսյան/*

   ***Որոշեցին՝***

Հաստատել «Կազմակերպությունների կողմից կատարված բնապահպանական ծախսերը» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթը և լրացման հրահանգը:
*/Անհատական/*

6. **Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

6.1 **Հաշվետվություն 02-06.12.2006թ. Թեհրանում (Իրան) ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի կողմից կազմակերպված հաշմանդամության և առողջության վիճակագրության վերաբերյալ առաջին տարածաշրջանային դասընթացին մասնակցության վերաբերյալ:**
*/Զեկուցող՝ Ա. Կարապետյան/*

***Որոշեցին՝***

Ընդունել ի գիտություն 02-06.12.2006թ. Թեհրանում (Իրան) ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի կողմից կազմակերպված հաշմանդամության և առողջության վիճակագրության վերաբերյալ առաջին տարածաշրջանային դասընթացին մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:
*/Արձանագրային/*